սկսան չարիս առնել Սահակին և Ս. Աթոռին։ Եւ եհաս համբաւս այս առ կաթուղիկոսն յԵւդոկիա քաղաք, և դարձաւ անտի, և եկն գարձեալ ի Ս. Էջմիածին։ Եւ նոքա որք կամէին չարիս առնել Աթոռին, յորդորեցին զՈնոփրիոսն՝ և առաքեցին հրաւիրակ Եղիազարին. և ելեալ գնաց մինչ ի Կարին։ Իսկ Եղիազարն իբրեւ լուաւ զդառնալն կաթուղիկոսին, քամահանս վարկաւ ինքեան և ի խոր խոցեցաւ ի սրտի իւրում...» (2)։

Եղիազար տեսնելով որ պիտի չկարենայ Էջմիածնի մէջ կաթողիկոսանալ, կ'որոշէ հակաթոռ կաթողիկոսութիւն մը հաստատել Երուսաղէմի մէջ։ Իր այս խորհուրդը կը յայտնէ Կիլիկիոյ Խաչատուր կաթողիկոսին, որ 1663ին ուխտի համար Երուսաղէմ կը գտնուէր։ Այս մասին Օրմանեան կը գրէ. «Գլխադիրի մատուռին մէջ առանձնանալով անոր յայտնեց Օրմանեան գաւառները Էջմիածինի կաթողիկոսութենէն զատելու խորհուրդը, Կիլիկիոյ Աթոռին չդպչելով, և անոր թողլով որչափ ինչ արդէն անոր կը պատկանէր, և հաւատացածներուն համար նոր կաթողիկոսութիւն մը ստեղծել, և զայն իրեն սեփականել, Աթոռն Երուսաղէմի մէջ հաստատելով, և Երուսաղէմի ու Կ. Պոլսոյ պատրիարքութիւնները իրեն ենթարկելով։ Գործին յա-

(2) Զաքարիա, անդ, հաս. Բ. էջ 71—72: